

633.1

U-50

1932_{pr}

19 2010

633.1

U-50

14

ՍՈՐԳՈՅԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կազմեց

ԿՈՍՏԱՆՏԻՆ Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Խմբ. Ն. Ղազարյան

ՊԵՏՂՐԱՑ

1982

ՅԵՐԱՎԱՆ



15174-52

Պետերատի տպարան
Հրատարակ. № 2167
Գլավիտ 7114 (P)
Պատվեր 473
Ցիքաժ 5000

Հանձնված է արտադրության 10/II 1932 թ. Մ. Ֆ. Ե.
տպագրվելու է 16/II 1932 թ.

ՍՈՐԳՈՅԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սորգոն իր արտաքին տեսքով և հատկություններով շատ նրբան է մեր տեղական կորեկին, միայն այն տարբերություններ կա, վոր նա յերկար ցողուն է ձգում մինչև (չորս ու կես արշին) 3 մետր և ել քիչ ավել բարձրությունը: Հարավային տար յերկրներում ցողունի յերկարությունը հասնում է մինչև (3 սաժեն) 6½ մետր: Ցողունը գլխին ունի փնջիկ, վորը զանազան գույնի և ձևի յե լինում:

Սորգոն մի տարվա բույս է. նրա տեսակները շատ են: Հատկերի ձևով բաժանվում են 3 տեսակի՝ փնջաձև, ճյուղավորված և հավաքված, ունեն դանաղան անուններ՝ դուրբա, մայլո, ջուղարա, դուլյան. կա չաքարի սորգո և առանց չաքարի. սերմի գույնը լինում է ճերմակ, նարնջագույն, կարմիր, դեղին: Կան չուտ հասնողներ և ուշ հասնողներ:

Սորգոն շատ տարածված է Աֆրիկայում, Ասիայում, Ամերիկայում. տեղական բնակիչները դորձադրում են հացի տեղ. դրանով կերակրում են նաև տավարին:

Սորգոյի ցողունն իր մեջ ունի քաղցր հյութ, վորից մեծ քանակությամբ չաքար և բեքմեղ են պատրաստում, ինչպես ճակնդեղից և չաքարեղեգնից:

Տավարի կանաչ կերի համար ցանում են չուտ հասնող տեսակը, վորի հասունությունը տևում է 70—100 օր, նույն տարվա յեղանակին, հողի և այլ պայմաններին: Ռուսաստանում տարածված է վաղահաս հակինթ (ранний янтарь) տեսակը, վորն աղբիլին ցանելուց՝ հուլիսի ըսկըգրին կարելի յե հնձել: Իսկ Անդրկովկասում, գլխավորապես Վրաստանում, ցանում են ջուղարա տեսակը:

Վեգետացիայի ընթացքում սորգոն կարելի յե 2—3 անգամ հնձել. մի հեկտար տեղից ստացվում է 180—937 ցենտներ չոր սորգո, նայած տեսակին և մշակույթին. իսկ կանաչ հնձելուց՝ 204—ից մինչև 431 ցենտներ: Կովկասում սորգոն ցանում են գլխավորապես նրանից վրձիններ, ավելներ պատրաստելու համար: Սերմը լավ կեր է հավերի համար:

Ամերիկայում սորգոն մեծ չափով գործադրվում է իբրև սերտաբույս: Նրա սերուն համարյա հավասարաբեկ է և յեղիպտացորենի սերուն, դեռ վերջինից էլ համով է և անասունները մեծ արտոբակով են ուտում: Սորգոն մի հեկտարից ավելի մեծ բերք է տալիս, քան յեղիպտացորենը, նա չորեքշաբթի ավելի դիմացկուն է և ավելի հարավային յերկրի բույս է, քան յեղիպտացորենը, նա մեզ մոտ, մեր չորային տեղերում ամենալայն սերտանյութն է:

Ավելներ պատրաստելու համար սորգոն շուտ չեն հընձում, թողնում են մինչև վոր լավ հասնում են սերմերը: Հաջող տարիներին մի հեկտար տեղից ստացվում է 25—35 ցենտներ սերմ:

Չինաստանում սորգոյի մի տեսակը կա, վոր գառլյան է ասվում. նրա ծղոտը գործադրվում է տավարի կերի համար, կամ տան վառելիքի, իսկ սերմից մի տեսակ ողի կամ ուղիւտ են պատրաստում:

Աչքի առաջ ունենալով, վոր սորգոյի մշակությունը տավարի, խոզի, թռչնապահության համար մեծ նշանակություն ունի, մեր կողմերը և չքավոր ու միջակ գյուղացիությունն ևս պետք է հետաքրքրվեն և իրենց տնտեսություն մեջ մտցնեն թե սորգոն, չուգարան, գառլյանը և այլ տեսակները և օգտվելից սկսեն նրա ցանքը՝ 10—15 որ միջոց տալով, շարունակեն մինչև հուլիս ամիսը. այդպիսով ամառվա ընթացքում կանաչ կերի կողմից ապահովված կլինի օռովարը:

ՍՈՐԳՈՅԻ ՑԱՆՔԱՏԵՂԸ, ՀԵՐԿԸ ՅԵՎ ՍԵՐՄԸ ԶԳԵԼԸ

Սորգոն շատ խոնավություն չի սիրում. նա յերաշտին ավելի դիմացկուն է, քան թե յեղիպտացորենը: Սորգոն լավ աճում է կավավաղային, մինչև անգամ չորաքայթ հողերում: Նա շատ խոր արմատներ է ձգում և ուրիշ հացաբույսերի հետ համեմատած՝ ավելի քիչ պետք ունի հողից սննդաբար ծյութերի: Սորգոն լավ աճում է աշնանացան ցորենից հետո:

Քանի վոր սորգոն 1,5—2 մետր յերկայն արմատներ է ձգում, դրա համար հերկը վորքան հնարավոր է, պետք է վոչ պակաս՝ քան 15—20 սանտիմ. խոր լինի և ցանքատեղը աշնանը պատրաստած, իսկ դարնանը պետք է յերեսանց

հերկել, փոցիել և ապա մի հեկտարին ցանել չաբքացանով 20—25 կիլո սերմ, իսկ չաղացան՝ 36—48 կիլո: Շարքացանով սերմը ձգելուց, շարքը շարքից 50—60 սանտիմ հեռավորության վրա պիտի լինի: Սերմը պետք է ընկնի մի մատի հաստությամբ խորության վրա:

Սերմը յերբ ծլում, 6—8 սանտ. բարձրանում է, պետք է պլանիտ ասված ձեռքի գործիքով կամ ձեռուբազով մոլախոտերը քաղհանել, հողը փափկացնել, վորը շատ նպաստում է նրա աճելության:

ՅԵՐԲ ՊԵՏՔ Ե ՀՆՁՅԸ, ՍՈՐԳՈՆ ԿԱՆԱԶ ԿԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Տավարին կանաչ կեր ուտեցնելու համար, սորգոն հընձում են այն ժամանակ, յերբ սկսում է սերմի փնջիկներ (սվելներ) ձգել: Յերաշտի, խոնավության քիչ լինելու պատճառով, փնջիկներ ձգելը կարող են ուշանալ և ցողունները կոշտանալ, վորից ավելի դժվարամարս է դառնում. դրա համար չպետք է սպասել, պետք է հունձը սկսել վոչ բոլորը միանգամից, այլ հետզհետե, ամեն որ այնքան, վոր տընտեսության մեջ ունեցած անասուններին բավարարի. ավելորդ մնացածը պետք է չորացնել և պահել:

Կանաչ կեր տալուց, սկզբում քիչ-քիչ պետք է տալ, ուրիշ խոտեղենի հետ խառն: Սորգոն շատ հյութալի լինելուց՝ կարող է փորն ուռցնել: Սորգոն մեծ չափով պետք է ոգտագործել նաև իբրև սերտանյութ: Սիրոսի համար սորգոն պետք է քաղել նրա հասունության այն շրջանում, յերբ հատիկն սկսում է կարծրանալ, այս մոմենտին չոր նյութերի ամենամեծ մասսան է ստացվում: Սիրոսի համար ուշ ցանած սորգոն լավ է թողնել ուշ աշնանը հավաքել:

ՉՈՐ ՍՈՐԳՈ ՅԵՎ ՍԵՐՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՅԵՐԲ ՀՆՁՅԸ

Չոր սորգո ստանալու համար հնձելուց հետո յերեք որ թողնում են փոած իր ցանքատեղում, հետո ձիու, կամ ձեռքի փոցիով հավաքում են, փոքրիկ կուտակներ դնում, մի որ արևի առաջ պահում, վոր միջի շուրը բոլորովին քաղվի, հետո բերում 1½—2 սաժեն բարձրությամբ և լայնությամբ դեղեր դնում, վրայից խոտով, կամ ծղոտով ծածկում, վոր անձրևների շուրը ներս չմտնի: Այն դեպքում, յերբ սորգոն

ուչ հնձվի և ձյունի տակ մնա, ցրտահարվի, չպետք է տա-
վարին ուտացնել, կարող է դրանից թունավորվել: Չորաց-
րած ժամանակը, նա մնառ չի տալիս:

Թունավորելու դեպքում, պետք է շատ կաթ խմեցնել:

Սերմ ստանալու համար սորգոն թողնում են մինչև բու-
լորովին հասնում ե. հետո հնձում են գետնի յերեսից, չո-
րացնում, խուրձեր կապում և տուն բերում՝ կացնով, կամ
կտրիչ գործիքով սերմի փնջիկները կտրում, հեռացնում
փոյտեղեն մասից:

Մի հեկտարից ստացվում է 25—40 ցենտներ և ավելի
հատիկներ: Սորգոյի հատիկները տավարին կեր տալուց,
պետք է ջարդել, վարսակի հետ խառնել: Հավերին տալուց
շատ ձու յեն անում: Կաթնատու կովերին կամ հորթերին
սորգոն ուտեցնում են իրենց փնջիկներով, բայց հեշտ մար-
սելու համար առաջուց ջարդում են: Հավերին սորգոն ու-
տեցնելուց, լավ է յերբեմն ել ջարդած կարտոֆիլ և ճակն-
դեղ տալ:

ՍՈՐԳՈՑԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Սորգոյին աչքի ընկնող շատ վնասատուներ չունի, նրան
վնասում են մի տեսակ վոջիկներ, վոր մեծ քանակությամբ
նոր բացված տերևների և ցողունների վրա յերեալով, ար-
դեք են լինում նրանց անեցողությանը: Վնասում է և ժան-
գը, ներգործելով չաքարի սորգոյի քաղցր հյութի վրա:

ԲԱՅԻ ԿԵՐԻՑ ՍՈՐԳՈՑԻՑ ԻՆՁ ՆՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Սորգոյից չաքար ստանալու համար սերմը ձգում են
չարքացանով մի արշին հեռավորության վրա և չեն թողնում
մի փոսից 2 սերմ ծլի. մեկը հանում են, վոր մյուսը լավ ա-
ճի և հաստ ու բարձր ցողուն ունենա, վորից ավելի շատ
քաղցր հյութ է ստացվում: Շաքարի սորգոյի 2-րդական
ճյուղերը կտրատում (կրճատում) են: Շաքարի սորգոն հնձում
են ոգոստոսի վերջերին, կամ սեպտեմբերի սկզբներին, այն
ժամանակ, յերբ նրա թփի կանաչ գույնն սկսում է փոխվել,
բայց դեղին գույն ստանալ, վորը նշան է նրա կատարյալ
հասնելուն:

Սորգոն ավելի հարմար է մանդաղով հողի յերեսից հնձ-
նել, չարքերով դնել, հետո խուրձեր կապած տուն բերել,
փնջերը կտրել, հեռացնել, իսկ տերևները ցողուններից ձեռ-
քով քաղել: Այսպես մաքրած ցողունները յերկար չեն պա-
հում, վոր միջի քաղցր հյութը յեփ չգա խմորման չյենթարկ-
վի: Շաքարային հյութը հանելու համար կա առանձին մա-
մուլ յերկու գլանակներով, վորոնց միջոցով յերկու հողի
մզում են, մեկը ցողուններն է տալիս, մյուսն անիվը պտը-
տեցնում:

Յերեք հոգի կարող են մի որում 10—12 փութ հյութ
հանել: Դուրս յեկած հյութն անում են կիսատակառի մեջ,
անցկացնում բրդի շորից, կամ կտավից, վոր մաքրվի ման,
կտրոններից: Յերեկոյան վերցնում են մի դույլ ճերմակ կավ
(գիլ) հյութը նրա մեջ խառնում և մի գիշեր պահելով՝ մյուս
որը մաքուր հեղուկը վերցնում յեփում են կրակի վրա և
բեքմեք պատրաստում: Կաթնայում յեփ գալուց, մինչև
թանձրանալը, կրակը շատ մեղմ պետք է լինի, վոր տակը
նստած կեղտը չբարձրանա, չխառնվի: Քափը պետք է քաշել
և այնքան յեփ տալ, վոր կանաչ քափը փոխվի կարմրավուն
դառնա:

Մի վեդրո սորգոյի մեղր, կամ բեքմեք ստանալու հա՛րա:
դնում է 5—6 դույլ հեղուկ հյութ:

Սորգոյի մեղրը կամ բեքմեքը չաքարից պակաս չե, նը-
րանից պատրաստում են զանազան թխվածքներ, կամսուռ,
թեյի, սուրճի մեջ գցում. նա շատ համով և հացի հետ և
յերեսաները շատ են սիրում:

Մի հեկտար տեղից կարելի յե 20—30 ցենտներ բեքմեք
ստանալ: Կան Գործարաններ, վորտեղ հատուկ մեքենաների
միջոցով չաքար են պատրաստում և սորգոյի մի հեկտար
տեղից ստացվում է 16—20 ցենտներ մաքուր չաքար:

Այն չընտնում, վորտեղ անում են ճակնդեղ ու չաքար-
յեղեղ, բոլորովին ձեռնտու չե սորգոյից չաքար պատրաս-
տելը, այլ նա պետք է կերի համար ծառայի, գլխավորապես
սիրտի:



Ծ ԿՈՊ.

« Ազգային գրադարան



NL0289694

18738